ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՊՁԲ-Ջ-18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով շինանյութի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

21 նոյեմբերի 2017 թ.
ժամը. 11:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Ա. Թադևոսյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Ա. Ջալադյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)
	Մ. Մելքոնյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)
	Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
	Բ. Եդիգարյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման մասին

(Ա. Թադևոսյան)

Ընդունել ի գիտություն՝

• Հրավերով սահմանված կարգով մասնակցից պահանջվել են առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

• Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ի, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Հրավերով սահմանված ժամկետում ստացվել են մասնակցից պահանջվող փաստաթղթերը և հարցման վերաբերյալ եզրակացությունը:

1. Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց՝

1. Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և անհամապատասխանություններ չհայտնաբերեց:
2. ՀՀ կառավարությանն առընթերն պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման վերաբերյալ եզրակացությունը և պարզեց, որ մասնակցի ներկայացրած հայտարարությունը համապատասխանում է իրականությանը՝
   - մասնակիցը չունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ,
   - հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ մասնակցի ներկայացրած գնային առաջարկից,

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Մասնակցի որակավորումը «Ֆինանսական միջոցներ» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

3. Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակցի որակավորումը «Մասնակցության իրավունք» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1.«Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:
2. 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Բեսթ Գրուպ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է կողմ-5 դեմ-0

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել պայմանագիրը կնքվելու կամ չկնքվելու այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11:00-ին, ք. Երևան, Վարդանաց փակուղի 8ա 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝	_____	Ա. Թադևոսյան
Անդամներ՝	_____	Ա. Ջալադյան
	_____	Մ. Մելքոնյան
	_____	Ն. Համբարձումյան
	_____	Բ. Եդիգարյան
Հանձնաժողովի քարտուղար	_____	Ն. Նիկոլայան